ըստ օրէ և կային մնային ի պատերազմ լի սրտմտութեամբ։

Յետ մահուանէ թագաւորին զաւուրս ԿԸ, Հոկտեմբերի ամսոյ ԺԷ(*), կային սպահք[1]) և հայէին բորբոքմամբ առ ի պատերազմ ընդ միւս գունդն զօրաց։ Եւ իբրև ոչ անսացին առ ի խաղաղանալ, մուֆթին և վէզիրն և զօրապետք զօրացն ընդ նոսա ի մի վայր գումարեցան ի տեղին Օրթայ ճամոյ, լի ցասմամբ և բարկութեամբ վառեալք սպառազինեալք՝ եկեալ ժամանեցին ի ձիրնթաց ասպարիսին՝ ի սրահին Եէնկի ճամոյ առ միւս գունդն զօրաց, որ էին ի պատրաստի։ Եւ կացին յերկուց կողմանց ճակատ առ ճակատ և յարեան ի վերայ միմեանց զաղանացեալ զօրութեամբ. քաջքն խիզախէին, արիացեալքն գոչէին, սուսերքն փայլփայլէին և սաղաւարտքն շողշողային և ի բազմախուռն նիզակացն և ի փայլմանէ պատենազէն վառելոցն՝ ընդ ճառագայթից արեգականն սոսսոսային (?)։ Եւ ասա էր տեսանել զաղէտ և զտագնապ կորստեան նոցա, զի որպէս փայտք հարեալք ի փայտահարաց, այնպէս հարեալք ի միմեանց բազմահար հարուածովք՝ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց։ Եւ ոմանք ի փախուստ դառնային և ոչ ժամանէին ի տեղի թաքստեան, այլ հասեալքն զնոսա ոչնչացուցանէին. ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ըղեղասոյզ սատակէին, ոմանք յերկուս հերձեալ և ոմանք գլխահատք, ոմանք կիսամահք լեալ ոտնատ և ձեռնատ, քընթատ և ակընջատ տքային և հեծային և կսկծանօք զհոգիս իւրեանց արձակէին, և լի լինէր արեամբ և դիակամբք շրջապատ և սրահ ճամուն և ի միջի նորա և յելսն մնարային փախուցելոց զօրաց

1) սպահք.

(*) Լուս. աւուրբ պայրամին։